

այ. Կ. Եղեանի գրքի գլխաւոր կէտերի բովանդակութիւնը, որ ես քաղուածօրէն առաջ բերի:

Ես կը կամենայի ամփոփել այս թուուցիկ տեսութիւնը նոյն խօսքերով, որով ինքը հեղինակն է վերջացնում. «Այսպէս՝ Մեծն Պետրոսի ժամանակ Ռուսաստանի և հայ ժողովրդեան մէջ գոյացած կապը և վստահութիւնը լիովին զիտակցաբար ամրացաւ Եկատերինէի իմաստալի կառավարութեան օրով. Ռուսաստանի ամեն կողմի հայերի ինքնագոհ անձնուիրութիւնն ու մատուցած ծառայութիւնները, որոնք վաւերացուած են զահի բարձրութիւնից բազմաթիւ հրովարտականերով յանուն հայ ժողովրդի և նորա հովուապետների, այս յարաբերութեանց բնական հետեանքն էին: Պահպանել այս զգացմունքները, նպաստել նոցա զարգանալուն իւրաքանչիւր քաղաքացու սրբազան պարտականութիւնը սլիտի համարուի, որ իւր հայրենիքի բարիքն է փափագում, մանաւանդ իշխանութիւն ունեցող անձանց. վստ ծառայութիւն են անում նոքա, որոնք թուլացնում են այդ բարոյական կապերը և փոխադարձ անվստահութիւն են արծարծում ալնտեղ, ուր դորա համար պատմական հող չկայ: Անցեալի հետ ծանօթանալը հեռացնում է տարաձայնութիւնների շարժառիթները և փոխադարձ յարգանքի ու համակրանքի բարի զգացմունքներ է ներշնչում: Մեզ երջանիկ կը համարենք, եթէ մեր հետազօտութիւնը այդ կողմից, որքան և իցէ օգուտ բերէ»:

Մ. ԲԱՐԵԱՌԻՍ ԲԵԱՆ.

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ. ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՄԸ ԽՕՍԲԵՐԸ.

Վիեննա, 1901. դիւն է 3 Ֆրանկ. էջ 8+224.

Այս ամենաընտիր թղթի վրայ տպուած և զեղադիտական ոչ մի թերութիւն չունեցող հրատարակութեամբ լուս տեսած դիրքը պարունակում է Ցածկահալոց մանկավարժական և զրականական ասպարիզում գործող լալանի Ռեթէոս Պէրպերեանի զանազան ղէպքերում արտասանած ճառերը: Ռեթէոս Պէրպերեանը հիմնադիրն ու տէրն է Կոստանդնուպոլսի մեծ աշուն վառարկած Պէրպերեան միջնակարգ դպրոցի, որի

գործութեան բռնակցութեամբ մեծ չքով տօնեց այս տարիս-
կի։ Պօլսի հայ լիտերիդէնտ հասարակութիւնը, Գիրքը հեղի-
նակի լօրելեանի առիթով տպագրուած լինելով՝ նուիրուած է
լօրելեանը կազմակերպող մասնաժողովի նախագահ Ամնա-
պատիւ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանին, Կոստանդ-
նուպօլսի հայոց Պատրիարքին։

Յառաջաբանը կազմում են Պէրպէրեանի Օրմանեան
Պատրիարքին ուղղած երախտադիտական և շնորհակալու-
թեան սրտաբուլիս խօսքերը—Որքադան Պատրիարքը լատուկ
կոնդակով դրուատելով Պէրպէրեանի աղգին մատուցած ծա-
ռալութիւնները՝ յորդոր էր կարդացել հայ ժողովրդին՝ ըստ
արժանւոյն դնահատել նորա աշխատանքը և մասնակցել լօրե-
լեանին—և Պատրիարք Հօր պատասխանը։

Սրբադան Օրմանեանի պատասխանի մէջ մի բնորոշ և
չատ մխիթարական կէտ կալ։ Շնորհակալութիւն լատնելով՝
Պէրպէրեանին իրեն ուղղած ձօնի առթիւ՝ Պատրիարքն ա-
սում է. «...բաց մնծադոյն պատիւ կ'ըզամ, տեսնելով որ
առաւել ուսուցիչ և դաստիարակի կոչմանս կը լեւուք Ձեր
ձօնին առթիւ, որ հաստատուն աշխատութեանց հետ համեստ-
արդիւնաւորութեան գոհունակութիւնն ալ կը գրդօէ լիտ-
(էջ էօ) Ուրեմն ամենից մեծ պատիւն իրեն համար՝ ուսուցիչ-
եղած լինելն է համարում մի մարդ, որ ամբողջ Տաճկահայոց
եկեղեցական ու քաղաքական սկստն է։ Սրբադան Պատրիարքը
ուսուցչութիւնն «Էրբէլ-Էնթըն» ասպարէզ» է համարում։ Մենք
այդ խօսքերը բնորոշ անուանեցինք, որովհետեւ դա ցոյց է
տալիս հայ ժողովրդի լուռաջողութիւնը և քաղաքակրթու-
թիւնը, որ այդպիսի գաղափարի աէր մարդ է ընտրում իբրեւ-
պետ և ղեկավար։

Գիրքը բաղկացած է չորս մասերից. ա. Վերջին իօօիք—
Պէրպէրեան զպրոցի շրջանաւարտներին ուղղած զանազան
ժամանակ— բ. Հօգիւն իօօիք—զանազան հանդէսներում ար-
տասանուած ճառեր. գ. Կերպնուր իօօիք—և դ. Հրօծ։ շրջ
իօօիք—դամբանականներ։ — Թէև գրքի մէջ պարունակուած
հատուածներն համարեմ թէ բոլորն էլ նախապէս տպուած են
հղել զանազան պարբերական թերթերում և ուրիշ հրատարա-
կութեանց մէջ, այնուամենայնիւ այս փոքրիկ հատորը մի
զրական նորութիւն է՝ աժանի ամեն մի զրագէտի գրասե-
ղանի վերայ դրուելու։

Ի՛նչ սիրճ, սա՛ուն, պարզ և հասկանալի լեզու. ի՛նչ ըն-
տիր ոճեր. ի՛նչ գեղարուեստօրէն կազմուած նախադասութիւն-
ներ։ Կարդում ես, կարդում և չես ձանձրանում, դարձեալ ու-
ղում ես կարդալ, որովհետեւ մէջը միտք կայ, հոգի կայ, զի-
տութիւն կայ, գրական հմտութիւն, լայնատեղծական ա-
ւելն, նյութի բազմազանութիւն և ալլն. ուստի հայ նոր գրա-
կանութեան մէջ հազիւ թէ գտնուի մի այնպիսի զրիչ, որ Ռե-

թէոս Պէրպերեանի չնորձալի գրչի բոլոր լատկութիւնները ամբողջ է իւր մէջ. ասիտոս, որ մենք չենք կարդում Տաճկահայ գրողների հեղինակութիւնները և չափ վայրի վերոյ դադափար ունինք նոցա մասին: Ժամանակ չէ արդեօք սկսելու:

ԲՐԻՉ

ԳԱՅՐԻԷԼ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՅ. ՊԷՊՕ: Կօմեդիա նրեք արարուածով. Բ. տալ. ուղղած. Թճֆլիշ. տալ. Մկ. Մարտիրոսեանցի. գ. 50 կ. էջ XIV+122.

Մեր ծերունադարդ, տաղանդաւոր թատերագիր Գ. Սունդուկեանի գլուխ գործոցն է «Պէպօն». և իրաւամբ վալելում է ամբողջ աղբի համակրութիւնը: 1901 թ. Ապրիլի 30-ին լրացաւ Պէպօի ներկայացման 30 ամեակը. հայ հասարակութիւնն ամեն տեղ հանդիսաւոր կերպով տօնեց այս դասական գորուածքի ներկայացման երեսնամեակը և այդ առիթով իւր խորին լարդանքները մատուցեց ալեգարդ հեղինակին: Առանձին շքով և հանդիսաւորութեամբ տօնեցին այդ լօբեկեանը Թիֆլիզի հայ, վրաց և ռուսաց թատրոնական բեմերը:

«Պէպօն» գեղեցիկ և ճշգրիտ նկարագիր է Թիֆլիզի «կլինտո», «պաժարնիլ» կոչուած ու ամենքից արհամարուած դասակարգի կենցաղի և բարոյական գաղափարներին:

«Պէպօն» տպագրութեամբ առաջին անգամ լոյս է տեսել 1876 թ. և այժմ միայն լոյս է տեսնում երկրորդ տպագրութեամբ: Այսպիսի մի ժողովրդական ու ամենքին սիրելի դաժձած գրուածքի այսքան քիչ տարածուելը և այսքան ուշ երկրորդ տպագրութեամբ լոյս տեսնելը նորից ասպացուցանում է, որ մեր ժողովուրդը չէ սիրում թատերական գրուածքների ընթերցանութիւնը, թէև բեմի վրայ դրանք ներկայացումը տեսնելիս՝ չափազանց ոգևորութիւն է արտայայտում:

Դրքիս յառաջաբանը, ինչպէս, և գիրքն ամբողջապէս նուիրուած է պ. Գէորդ Չմշկեանին, Պէպօի տիպը մարմնացնողին, և նկարագրում է «Պէպօի» գաղափարը լղանալու հանգամանքները: Այս յառաջաբանն ամբողջովին արտասպուած է գրքի առաջին հրատարակութիւնից:

Երկրորդ տպագրութիւնը մի քանի մանր փոփոխութիւններով է հրատարակել հեղինակը. ճիշդ է, դրանք մանր են, սակայն նրբութիւններ են արտայայտում. բերենք մի երկու օրինակ. երկրորդ արարուածի դ. տեսիլում Էփեմիան ծառային ասում է. «Ու դուն էլ էնէնց հաքի, վուր դիփունանց «ճիլ վէն հայ...». հեղինակն այժմ սրբադրում է. «...վուր դիփունանց «ճիլը հայ...» (էջ. 45).